

ջեցուցանեն: Եւ յամպլիոնին զպատկեր խաչելութեան կանգնելով, զձեռս տարածեալ ցուցանեն ժողովրդեանն ասելով թէ, ահա քո Աստուածն որ բեւեռեալ կայ ի խաչին» (Վկմ. էջ 618-619):

Պիղատոս առաջին անգամ չուզեց կատարել Արիմաթացիին խնդրուածքը. ան կարծեց թէ անկարելի է որ Քրիստոս բոլորովին մեռած ըլլայ, բայց երբ հարիւրապետէն լուրը իմացաւ, Արիմաթացիին հրաման տուաւ: Աւանդութիւնը կը պատմէ թէ Ս. Կոյսէն և հոն սպասող Իւղարեր կանանցմէ զատ, հոն կային Յովհաննէս, Նիկողիմոս և ուրիշներ որ կ'օգնէին Արիմաթացիին բարեպաշտական գործին:

Ս. Կոյսը ամէն կարելի անձկութիւններէ ազատելու համար, Յովհաննէս խնամով պահեց բեւեռները, եւ Տիրոջ մարմինը երկիւղածութեամբ խաչէն վար առնելով յանձնուեցաւ գիրկն Ս. Կուսին: Ս. Կոյսը անգամ մըն ալ սեղմեց իր սիրեցեալ Որդին իր վշտացեալ սրտին վրայ, որ արդարեւ սուրով մը վիրաւորուած էր, ինչպէս գուշակած էր Սիմէոն:

Այս տեսարանը արուեստի միջոցաւ յաճախակի ներկայացուած է, և որ կը կոչուի Pietas (բարեպաշտութիւն), նաեւ կը պարունակէ բազմութիւն մը տրտմալից հրեշտակներու, որ յարգալից սարսափումով կը նայէին մեր Փրկչին մարմնոյն քայքայուած տաճարին վրայ, մինչ անոնցմէ սակաւաթիւ մաս մը երկինք կը թռչէր Չարչարանաց խորհրդանշաններով: Մի քանի վկայութեանց համաձայն կ'ենթադրուի թէ Ս. Կոյսը իր Որդւոյն սոսկալի Չարչարանաց տեսարանէն նուազած է, եւ երբեմն ալ, ան նուազած կը ներկայացուի, երբ Փրկիչը Գողգոթա կը տարուէր, և խաչին վրայ կը բեւեռուէր, և այն ժամանակը Ա-